ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2025

ՀՈՒՆԻՍ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 **Ստորև թվարկվածներից ո՞րն է համարվում բնական աշխարհահամակարգ։**

1) անտառը
2) արոտավայրը
3) քաղաքը
4) ջրամբարը

2 **Ստորև թվարկված միտումներից որի՞ պարագայում են մարդկության առջև ծառացած բազմաթիվ հիմնախնդիրներ ստանում համամոլորակային բնույթ ու դրսևորումներ։**

1) էկոլոգացում
2) սոցիոլականացում
3) գլոբալացում
4) մաթեմատիկացում

3 **Ո՞րն է տեղանքում կողմնորոշման առավել ճշգրիտ միջոց.**

1) լիալուսինը
2) կողմնացույցը
3) Բևեռային աստղը
4) Արեգակը

4 **1 : 50 000 000 մասշտաբ ունեցող գլոբուսի վրա երկու կետերի հեռավորությունը 5,6 սմ է։ Որքա՞ն կլինի դրանց իրական հեռավորությունը.**

1) 1450
2) 2800
3) 8750
4) 6800

5 **Ստորև թվարկվածներից ո՞րն է ձևավորվում երկրագնդի պտույտի և միջուկում նյութերի տեղաշարժերի անմիջական պատճառով։**

1) բևեռափայլը
2) ավազային անապատը
3) քարոլորտը
4) մագնիսական դաշտը

6 **Ստորև թվարկվածներից ո՞ր ժամանակաշրջանն է մտնում կայնոզոյան դարաշրջանի մեջ։**

1) նեոգեն
2) տրիաս
3) օրդովիկ
4) կարբոն

7 **Ստորև թվարկվածներից ո՞ր ապարն ունի փոխակերպային ծագում։**

1) ածուխ
2) քվարց
3) կավիճ
4) բազալտ

8 **Ո՞րն է Խաղաղ օվկիանոսի օվկիանոսային հոսանքներից։**

1) Բենգելյան
2) Գոլֆստրիմ
3) Բրազիլական
4) Պերուական

9 **Ստորև թվարկվածներից ո՞ր լիճն ունի մնացորդային ծագում։**

1) Աժդահակ
2) Սևանա
3) Արալյան
4) Բայկալ

10 **Մթնոլորտի ո՞ր շերտն է տարածվում 50-55 կմ բարձրություններում։**

1) ներքնոլորտ
2) օզոնային շերտ
3) վերնոլորտ
4) արտաքին ոլորտ

11 **Ստորև թվարկվածներից ո՞րը կլիմայաստեղծ գործոն *չէ։***

1) ամպամածության աստիճան
2) տեղանքի բարձրություն
3) գերիշխող քամիներ
4) աշխարհագրական լայնություն

12 **Ստորև թվարկված հողատիպերից ո՞րն է ամենաշատը պարունակում հումուս։**

1) դեղնահողեր
2) կարմրահողեր
3) սևահողեր
4) պոդզոլային հողեր

13 **Որտե՞ղ են ստեղծվում օազիսները։**

1) անապատներում
2) կամպոսներում
3) սավաննաներում
4) սելվասներում

14 **Ստորև թվարկվածներից ո՞ր նեղուցով է Մադագասկարը բաժանվում Աֆրիկայից։**

1) Ջիբլարթարի
2) Բոսֆորի
3) Դարդանելի
4) Մոզամբիկի

15 **Ստորև թվարկվածներից ո՞ր քամիներն են ձևավորվում Աֆրիկայի արևադարձային գոտիներում և փչում են դեպի հասարակած։**

1) մուսսոն
2) պասսատ
3) թայֆուն
4) տոռնադո

16 **Ստորև թվարկվածներից ո՞ր ծովածոցն է ողողում Ավստրալիայի ափերը։**

1) Հուդզոնի
2) Գվինեական
3) Կարպենտարիա
4) Ադենի

17 **Ստորև թվարկվածներից ո՞ր կենդանին է ապրում Անտարկտիդայում։**

1) պինգվին
2) բադակտուց
3) համրուկ
4) կենգուրու

18 **Ստորև թվարկվածներից ո՞ր ծառն է աճում Հարավային Ամերիկայում:**

1) սեխածառ
2) կազուարիա
3) սեքվոյա
4) էվկալիպտ

19 **Ստորև թվարկվածներից ո՞ր բնական զոնան է տարածված Հյուսիսային Ամերիկայում:**

1) սելվաս
2) պամպա
3) լյանոս
4) պրերիա

20 **Ստորև թվարկվածներից ո՞ր լեռնաշղթան է գտնվում Հյուսիսային Ամերիկայում:**

1) Ատլասի
2) Սկանդինավյան
3) Կապի
4) Ապալաչյան

21 **Ստորև թվարկված գետերից ո՞րը *չի* հոսում Եվրասիայով:**

1) Ամուր
2) Յանցզի
3) Մուրեյ
4) Մեկոնգ

22 **Ստորև թվարկված սարահարթերից ո՞րը *չի* գտնվում Եվրասիայում:**

1) Գոբի
2) Լավրենտյան
3) Դեկանի
4) Արաբական

23 **Ստորև թվարկվածներից ո՞ր գործող հրաբուխն է գտնվում Հարավային Ամերիկայում:**

1) Կոտոպախի
2) Հեկլա
3) Կրակատաու
4) Էտնա

24 **Նշված պետություններից ո՞րն է ձևավորվել աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման հին փուլում։**

1) Բյուզանդիա
2) Պորտուգալիա
3) Ղազախստան
4) Ասորեստան

25 **Հետևյալ գետերից որի՞ ափին է ձևավորվել շումերական քաղաքակրթությունը։**

1) Նեղոս
2) Տիգրիս
3) Արաքս
4) Յանցզի

26 **Նշվածներից ո՞րն է համարվում անկլավ։**

1) Սան Պաուլու
2) Սան Մարինո
3) Սան Ֆրանցիսկո
4) Սան Դիեգո

27 **Նշված գործոններից ո՞րը *չի* ազդում բնակչության տեղաբաշխման վրա։**

1) պատմական
2) կրոնական
3) բնական
4) ժողովրդագրական

28 **Ժողովրդագրական անցման ո՞ր փուլն է կապված տնտեսության զարգացման հետարդյունաբերական փուլի հետ։**

1) երկրորդ
2) երրորդ
3) չորրորդ
4) առաջին

29 **Նշվածներից ո՞ր երկրում է կյանքի միջին տևողությունը առավել երկար։**

1) Իտալիա
2) Անգոլա
3) Կոնգո
4) Մոզամբիկ

30 **Շաքարի արտադրության տեղաբաշխման վրա ո՞ր գործոնն է առավելապես ազդում։**

1) էկոլոգիական
2) աշխատանքային
3) վառելիքաէներգետիկ
4) հումքային

31 **Նշվածներից ո՞ր երկիրն է համարվում կապիտալի խոշոր արտահանող։**

1) Չինաստան
2) Տաջիկստան
3) Ղրղզստան
4) Աֆղանստան

32 **Նշվածներից ո՞ր կրոնը տարածված *չէ* ՌԴ-ում։**

1) մահմեդականություն
2) սինտոյականություն
3) բուդդայականություն
4) քրիստոնեություն

33 **Նշվածներից ո՞ր թերակղզին *չի* գտնվում Հարավային Եվրոպայում։**

1) Ապենինյան
2) Բալկանյան
3) Սկանդինավյան
4) Պիրենեյան

34 **Արևմտյան Եվրոպայի ո՞ր երկիրն է առավելապես անտառապատ։**

1) Գերմանիա
2) Ֆրանսիա
3) Շվեյցարիա
4) Ավստրիա

35 **Հյուսիսային Եվրոպայի արդյունաբերության ճյուղերից ո՞րն է առաջատար։**

1) էլեկտրաէներգետիկա
2) մետաղաձուլություն
3) մեքենաշինություն
4) սննդի արդյունաբերություն

36 **Նշվածներից ո՞ր տարածաշրջանն է առաջատար փյունիկյան արմավի արտադրությամբ:**

1) Հարավարևմտյան Ասիա
2) Հարավային Ասիա
3) Հարավարևելյան Ասիա
4) Արևելյան Ասիա

37 **Հնդկաստանի ուղևորափոխադրումներում տրանսպորտի ո՞ր տեսակն է առաջատար:**

1) երկաթուղային
2) ծովային
3) օդային
4) ավտոմոբիլային

Քարտեզ 1



38 **Քարտեզ 1-ում Ը տառով ո՞ր նավահանգիստն է նշված։**

1) Թայբեյ
2) Շանհայ
3) Սինգապուր
4) Տոկիո

39 **Քարտեզ 1-ում Զ տառով ո՞ր գետն է նշված։**

1) Հուանհե
2) Ամուր
3) Մեկոնգ
4) Յանցզի

40 **Հետևյալ թելատու մշակաբույսերից որի՞ մշակմամբ է Աֆրիկան առավելապես առաջատար։**

1) բամբակենի
2) ջութ
3) գանգրավուշ
4) սիսալ

41 **Լատինական Ամերիկայի մայրաքաղաքներից ո՞րն է գտնվում ավելի քան 3700 մ բացարձակ բարձրության վրա։**

1) Լիմա
2) Լա Պաս
3) Կիտո
4) Սան Խոսե

42 **Հետևյալ գիտնականներից ո՞րը *չի* այցելել Հայաստան։**

1) Պտղոմեոս
2) Քսենոֆոն
3) Ալիշան
4) Հերոդոտոս

43 **Ո՞ր լեռների արևելյան եզրին է գտնվում Թոնդրակ լեռնագագաթը։**

1) Գեղամա
2) Ծաղկավետ
3) Զավախքի
4) Ծաղկանց

44 **Հետևյալ հանքավայրերից որո՞ւմ կա նեֆելինային սիենիտ։**

1) Արթիկ
2) Մեղրաձոր
3) Արզնի
4) Շվանիձոր

45 **Հետևյալ բնակավայրերից որո՞ւմ է արևափայլի տևողությունը ամենաերկարը։**

1) Գյումրի
2) Արտենի
3) Մարտունի
4) Արենի

46 **Հետևյալ դաշտերից որո՞ւմ կան աղուտներ.**

1) Շիրակի
2) Մասրիկի
3) Արարատյան
4) Լոռվա

47 **Հետևյալ հատուկ պահպանվող տարածքներից ո՞րն է համարվում ազգային պարկ։**

1) Դիլիջանի
2) Խոսրովի
3) Շիկահողի
4) Էրեբունու

48 **Վաչագան և Կավարտիջուր վտակները ո՞ր քաղաքով են հոսում։**

1) Իջևան
2) Կապան
3) Հրազդան
4) Սևան

Քարտեզ 2



49 **Քարտեզ 2-ում Բ տառով ո՞ր սարահարթն է նշված:**

1) Սիսիանի
2) Եղվարդի
3) Կոտայքի
4) Ապարանի

50 **Քարտեզ 2-ում Դ տառով ո՞ր մարզն է նշված:**

1) Արագածոտն
2) Տավուշ
3) Գեղարքունիք
4) Սյունիք

51 **Մինչև քանի՞ հազար բնակիչ ունեցող բնակավայրերում են կառուցում բուսատեխնոլոգիական մաքրման կայաններ։**

1) 10000
2) 9000
3) 5000
4) 20000

52 **Զարգացած արդյունաբերական երկրներում առավելապես ի՞նչն է նպաստում հողերի վատթարացմանը։**

1) քիմիական աղտոտում
2) գերարածեցում
3) հողի վերին շերտի քայքայում
4) աղակալում

53 **Ո՞ր նյութերի արտանետման պատճառով են առաջանում թթվային տեղումներ։**

1) ազոտական միացություններ
2) ծծմբային միացություններ
3) աղային միացություններ
4) ածխածնային միացություններ

54 **«XXI դարի օրակարգը» ո՞ր քաղաքում է ստորագրվել։**

1) Կոպենհագեն
2) Յոհաննեսբուրգ
3) Ռիո դե Ժանեյրո
4) Ստոկհոլմ

55 **Ֆրանսիայի և Գերմանիայի միջև ո՞ր տարածքն է համարվում վիճելի։**

1) Սիլեզիա
2) Տրիեստ
3) Տրանսիլվանիա
4) Սաար

56 **Գրել այն ջրաէլեկտրակայանների համարները, որոնք գտնվում են Ռրոտանի գետային համակարգում:**

1) Արգնիի
2) Սպանդարյանի
3) Տաթևի
4) Արգելի
5) Շամբի
6) Շաքիի
7) Քանաքեռի
8) Զորագետի

57 **Գրել այն լճերի համարները, որոնք ունեն սառցադաշտային ծագում:**

1) Արմաղան
2) Պարզ
3) Սև
4) Աժդահակ
5) Կապույտ
6) Արփի
7) Ակնա
8) Քարի

58 **Գրել այն քաղաքների համարները, որոնք համարվում են ԱՄՆ-ի մեքենաշինության կենտրոններ:**

1) Դետրոյթ
2) Վոլֆսբուրգ
3) Մյունխեն
4) Շտուտգարտ
5) Թուրին
6) Թուլուզ
7) Չիկագո
8) Կիոտո

59 **Գրել այն խառը ռասաների համարները, որոնց ներկայացուցիչներն ապրում են Բրազիլիայում:**

1) պարդո
2) սուդանյան
3) եթովպական
4) ուրալյան
5) մուլատ
6) սամբո
7) հարավսիբիրական
8) մետիս

60 **Գրել այն գետերի համարները, որոնք թափվում են Ատլանտյան օվկիանոս:**

1) Միսիսիպի
2) Վոլգա
3) Նեղոս
4) Կոլումբիա
5) Ամազոն
6) Պարանա
7) Հուանհե
8) Կոլորադո

61 **Գրել այն ծովերի համարները, որոնք ողողում են Հյուսիսային Ամերիկայի ափերը:**

1) Կարիբյան
2) Բարենցի
3) Արաբական
4) Չուկոտյան
5) Հյուսիսային
6) Բերինգի
7) Կորալյան
8) Դեղին

62 Արևելյան Եվրոպայի երկրները դասավորել հյուսիսից հարավ հաջորդականությամբ։

1) Բուլղարիա
2) Ռումինիա
3) Ուկրաինա
4) Լեհաստան

63 Հարավարևմտյան Ասիայի երկրները դասավորել հարավից հյուսիս հաջորդականությամբ։

1) Օման
2) Իրաք
3) Սիրիա
4) Քաթար

64 Գետի լայնակի կտրվածքի մակերեսը 8,4 մ է, ջրի արագությունը՝ 5 մ/վ, որոշել գետի հոսքը կես ժամում։

65 Քաղաքի բնակչությունը 50 000 է, բնակչության բացարձակ բնական աճը՝ 600 մարդ։ Ներգաղթողների թիվը 2000 է, իսկ արտագաղթողների թիվը՝ 2400։ Որոշել քաղաքի բնակչության թիվը մեկ տարի հետո։

66 Երկրի բնակչության թիվը 180 000 է, ուրբանիզացման մակարդակը՝ 30%։ Որքա՞ն է քաղաքային բնակչության բացարձակ թիվը։

67 Տվյալ երկրի տարածքը 75000 կմ² է, իսկ ավտոճանապարհային ցանցի խտությունը՝ 2,5 կմ/կմ²։ Որքա՞ն է ավտոճանապարհների երկարությունը։

68 Որքա՞ն էլեկտրաէներգիա կարելի է ստանալ 4 տոննա նավթի այրումից (ջերմային գործակիցը՝ 1,5)։

69 **Աշխարհի մետաղաձուլության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ։**

1) Սև մետաղաձուլության արտադրանքի ծավալով մի քանի անգամ զիջում է գունավոր մետաղաձուլությանը։
2) Ալյումինի արտադրությունը նույնպես հումքատար է ու տեղաբաշխվում է հումքառատ շրջաններում։
3) Պղնձի արտադրությունը էներգատար է, ուստի տեղաբաշխվում է էժան էլեկտրաէներգիայի արտադրության շրջաններում։
4) Մետաղաձուլությունը արդյունաբերության նորագույն ճյուղերից է և բաժանվում է երկու ենթաճյուղի՝ սև և գունավոր մետաղաձուլության։
5) Սև մետաղաձուլության գլխավոր և ամենատարածված հանքային հումքը երկաթաքարն է։
6) Երկաթի հանքաքարի նախնական մշակումը կատարվում է հումքի արդյունահանման շրջաններում։

70 **Աշխարհի անասնապահության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ։**

1) Խոզերի գլխաքանակով աշխարհում առաջատար են Հյուսիսային Աֆրիկան և Հարավարևմտյան Ասիան։
2) Այծաբուծությունը զարգանում է հզոր արտադրական համալիրներում, որոնք կառուցվում են բնակչությամբ խիտ բնակեցված շրջաններում։
3) Մեղվաբուծության արտադրանքի ծավալով աշխարհի առաջատար երկրներն են ԱՄՆ-ն, Մեքսիկան, Ֆրանսիան, Ռուսաստանը։
4) Հյուսիսային Եվրոպայի երկրների գյուղատնտեսության համախառն արտադրանքում մեծ է անասնապահության բաժինը։
5) Անասնապահության առաջատար ճյուղերն են ոչխարաբուծությունը և ուղտաբուծությունը։
6) Խոշոր եղջերավոր անասնապահության գլխաքանակով աշխարհում առաջին տեղում է Հնդկաստանը։